

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ֆիլ. գիտ. թեկնածու

ՄԱՌԸ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ

Ն. Յա. Մառը իր գիտական երկարամյա գործունեության ընթացքում հաճախակի քննության է առել այս ու այն բառի ստուգաբանությունը և տվել հայերենի հարյուրավոր բառերի ճիշտ մեկնություն, ալպան «ճանճիկ—փոքրացուցիչ ճանճի, իսկապես նշանակում է փոքր ճանճ, բայց այստեղ, այս ձևը, հավանական է, պետք է դիտել որպես հավաքական գոյական հոգնակի թվով, ինչպես մարդ—человек, մարդիկ—люди»:¹ Շատ հաճախ ուղղել է բառարաններում տեղ գտած սխալները: Ակադ. Մառը, իր «Сборникъ Притчъ Вардана» աշխատության մեջ մեկնելով Սաղատ բառը, որպես մարմնի որևէ մաս, միաժամանակ ավելացնում է. «Մխիթարյանների բառարանում նույնպես բառը թարգմանված է որպես հիվանդ, ցավազար, բայց բառարանում բերված եզակի օրինակում այդ բառը ամենայն հավանականությամբ նույնպես նշանակում է մարմնի որևէ մաս»:²

ՀԱՍՏ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հ. Ա. ճառյանը այդ նույն՝ «Վատառողջ օդն միշտ շնչելովն վնասէ դսական» հատվածը բերելով այդ բառը մեկնում է թո՛ւ:

Ն. Մառը ստուգել է նաև բառերի ուղղագրությունը «мнѣгрезельскій, правильное мегрельскій»:³ Ակադ. Ն. Յա. Մառը, իր բառաստուգաբանական աշխատանքներից դուրս, որպիսիք ցրված են նրա ստեղծագործությունների մեջ, դբաղվել է նաև բառարա-

¹ Н. Марр, Сборникъ Притчъ Вардана. СПб. 1893 г., ч. I, стр. 465.

² Նույն տեղ, էջ 213:

³ Н. Марр, Извлечение из Сванско-русс. словаря. СПб. 1922 г., стр. IV.

նագրական աշխատանքներով: Դեռ ուսանողական տարիներից զբաղվել է բառարանագրությամբ, մի աշխատանք, որ նպաստել է նրան վրացերեն լեզվի և գրականության խորագնին ուսումնասիրության գործին: Ի թիվս ուրիշ աշխատությունների կազմել է «Список слов и выражений, существующими грузинскими словарями этимологически неверно объясняемых, превратно понимаемых или совершенно опущенных, составленный к четырем повестям— Вис-Рамнаим, Амирхан-Дареджаниани, Русиданиани и Дилариани», «Иностранные слова в грузинском тексте четвероевангелия и их происхождению».¹

Ակադ. Ն. Յա. Մառի գրչին են պատկանում «Древне-грузинско-русский словарь к 1—2 главам Евангелия Марка» (1913 г.), «Извлечение из Сванско-русского словаря» (1922 г.), «Абхазско-русский словарь» (1926 г.) «Հայ-Ռուսերեն բառարան», ճանրերն են բառարան և այլն:

Մառի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրողներից և ոչ մեկը, ըստ հարկին, կանգ չի առել նրա ստեղծագործության այդ կողմի վրա, նույնիսկ Միխայիլովան իր «Николай Яковлевич Марр» աշխատության մեջ Մառի Հայ-Ռուսերեն բառարանի անունն անգամ լրիվ չի նշում, գրելով. «Зимой 1892/93 г. Н. Я. продолжает чтение лекций по армянскому языку, в пособие к которым издает «Древнеармянскую Хрестоматию», и заканчивает обработку материалов для своей магистерской диссертации».²

Ն. Յա. Մառի բառարանագրական աշխատանքներից այսօր մեզ զբաղեցնողը նրա Հայ-Ռուսերեն բառարանն է:

Այդ աշխատությունն առանձին լույս չի տեսել, այլ կցված է հեղինակի «Պիտանի ընթերցվածք նախնի հայերէն ընդ որում բառարան Հայ-Ռուսերէն ի պէտս նորավարժից»:³

«Պիտանի ընթերցվածք»-ը բաղկացած է 172 էջից, որից 1—62 բանում են հատվածները, իսկ 63—172 էջը կազմում են Հայ-Ռուսերեն բառարանը:

«Պիտանի ընթերցում»-ը կազմելիս Ն. Յա. Մառը ի նկատի է ունեցել լենինգրադի համալսարանի արևելագիտական ֆակուլտետում սովորող իր ուսանողների պահանջները: Աշխատությունը

¹ Н. Марр, Избранные работы, т. I, 1933 г., стр. 223.

² В. А. Миканкова, Николай Яковлевич Марр. Москва—Ленинград 1935 г., стр. 35.

³ Ս-Պետերբուրգ, 1893 թ.:

յույս է տեսել 100 օրինակից: Շատ ուսանողներ ամբողջությամբ արտագրել են այդ աշխատությունը օգտագործելու համար:

Պիտանի բնթերցվածք-ի առաջաբանում հեղինակը խոսում է աշխատությունը կազմելու նպատակների, մինչ այդ ուսանողության օգտագործած աղբյուրների և նույնիսկ այն մասին, որ գրչագիրները տեքստերում թույլ են տվել սխալներ և այլն:

Աշխատության մեջ հատվածներ վերցված է Մատթևոս առաքյալից, այլն՝ Խորենացու, Նղիշի, Փարբեցու, Եզնիկ Կողբացու, Մերենսի, Ա. Լաստիվերացու, Ն. Կամբրոնացու, Ն. Շնորհալու և Վարդան Մեծի աշխատություններից: Աշխատության առաջին 13 էջի հատվածները համարակալված են և լրիվ չափով արտացոլվել են բառարանի մեջ:

Ակադ. Ն. Մառի Հայ-Ռուսերեն բառարանը, որը աշխատության մեջ, ինչպես ասացինք, բռնում է 63—172 էջը, ընդգրկում է շուրջ 3000 բառ:

Մառի բառարանը հիմնականում տեքստուալ բառարան է, քանի որ յուրաքանչյուր բառի համար նշված է համապատասխան բնորոշ տեքստը, ալյսպես՝ Ներսես Շնորհալու մասին գրած բառհոգվածը վերջացնելուց հետո հեղինակը գրում է. «Отрывок заимствован из Парижскаго издания 1828 г. стр. 18—24»: Այսպես չեն վարվել Մառին նախորդող նույնաբնույթ բառարան կազմողները՝ Պոպովը, էմինը:

Տեքստուալ բառարան կազմելով հանդերձ, պիտի հայտնենք, որ հեղինակը չի սահմանափակվել միայն այդքանով, այլ հավելել է մի շարք կարևոր այնպիսի բառեր, որոնք չեն հանդիպում քրեստոմատիայի նյութերի մեջ: Այդ բառերի մեծ մասը «իրենց ձևով նույնանում են քրեստոմատիայի մեջ հանդիպող նյութերին, — գրում է հեղինակը, — սակայն նշանակությամբ տարբերվում են»:

Ո՞րն է Մառի Հայ-Ռուսերեն բառարանի արժեքը:

Ն. Յա. Մառի բառարանը չպետք է դիտել որպես սովորական երկլեզվյան թարգմանական բառարան կամ սոսկ դպրոցական բառտետր: Այլ այդ աշխատությունն իր մի շարք արժեքավոր կողմերով դուրս է գալիս բառարանային արժեքի սահմաններից, դա մի աշխատություն է, որ բառական թարգմանությունից դուրս ունի նաև պատմական, աշխարհագրական, հնագիտական և այլ կարգի լայն ծանոթություններ:

Բառարանում վեր է հանված բացատրվող բառերի բոլոր բերությունները, այսպես. —

Աղուճք-ք ի этн. н. Албанцы; — геогр. н. Албания. Կամ՝ դու-նաւոր ա. (ե, ի) որ, цветной, разноцветный; хорошей масти, породистый. Объ еп. Иован.; красивый, прекрасный. և այլն:

Աշխատության բառ-հորվածներից յուրաքանչյուրը հազեցված է հանրագիտական բնութի լայն ծանոթություններով, ինչպես. —

Անի՝-ւոյ геогр. н. Ани, столица Армении в эпоху Багратидов: город этот был укреплен Ашотом Мсакером в 783 г. по Р. Х., а с 961 г. он был обращен в столицу; ныне развалины на правом берегу Арпачая (Ахурыана), верстах в 30-ти на юг от Александрополя.

Հեղինակի տված այս հանրագիտական բնութի բացատրությունները ավելի լայն ու բազմակողմանի են հատկապես այն հեղինակների մասին, որոնցից մեջբերումներ է արված «Պիտանի բնիքըցուածք»-ի մեջ, ինչպես՝ Հայ-Ռուսերեն բառարանում կարգում ենք.

Ներսէս-ի соб. им. Нерсес:

1. Нерсес Благодатный (Շիրհալի), выдающийся церковный деятель XII-го века, с 1166 года католикос всех армян, талантливый, плодовитый писатель и поэт, автор многих трудов по апологетике и герменевтике, равно как популярных посланий, песнопений, молитв и ряда как мелких, так и обширных стихотворных произведений; двадцать третья статья Хрестоматии есть отрывок элегии, написанной им по поводу взятия Эдессы мусульманами, в конце 1144 года:

2. Нерсес Ламбронский (Լամբրոնացի), сын Ламбронского князя Ошина, духовный писатель и деятель второй половины XII-го века, с 23 летняго возраста епископ в Тарсоне. Известны его поучения, слова, послания, толкования; есть у него и стихотворения, и несколько переводных произведений с греческого, сирийского и латинского языков. За широкое понимание христианского учения Ламбронский пастырь не раз подвергался нападкам со стороны части армянского духовенства, на которые ему иногда во избежание соблазна приходилось отвечать вразумляющим посланием՝ և այլն:

Բառարանում զետեղված են հասարակ և հատուկ անուններ, վերջինները գրված են մեծատառով:

Ակադեմիկոս Ն. Յա. Մառի ուսմունքի խորութիւնը երևում է նաև նրա բառարանային աշխատանքների մեջ: Մի շարք բառերի տալիս է բառացի թարգմանութիւններ, այսպես. «Միջագետք, ա. [междуречье] геогр. и. Месопотамия».

Մառը բացատրվող բառի մեկնութիւնն ավելի կոնկրետացնելու և ճիշտ արտահայտելու համար թարգմանվող բառն առնում է կապակցութիւնների մեջ, ինչպես.—

Անգամ с. время: раз, մի անգամ однажды, մեկ անգամ другой раз, вторично; որ մի անգամ кто только; даже մինչ զի մոյգս անգամ և այլն:

Հայ բառարանագրութեան մեջ Մառը առաջիններից էր, որ ճիշտ կերպով ածանցները՝ ան, ապ, ապա, և այլն բացատրում է առանձին, անկախաբար:

Ն. Մառը յուր «Պիտանի ընթերցվածք»-ի մեջ պահել է հայերենի ամենահին ուղղագրութիւնը՝ այսպես իւ-ի փոխարեն եւ, օ-ի փոխարեն աւ, նույնիսկ բառարանում մի շարք «աւ > օ» սկսվող բառեր տրված են նառանձին, ինչպես՝ աւրէնք, աւր, աւգոտ և այլն:

Բացի բառարանային սեփական, ինքնուրույն աշխատանքներից, Մառը գնահատել և ոգևորել է մեր բառարանագիրներին.

Ս. Տեր Մանվելյանը իր «Բառափնջիկ»-ի երկու խոսքի մեջ գրում է. «Բարեբախտաբար ամսույս 5-ին (1911 թ.—Գ. Գ) Անիի վերակենդանացնող անխոնջ վաստակավոր պրոֆեսոր Մառը՝ յուր Ս. էջմիածին տված գիտական նպատակով կատարած այցելութեամբ հետաքրքրվում է և իմ այս համեստ գործով և արտահայտելով հանդերձ յուր գոհունակութիւնը՝ խորհուրդ է տալիս ինձ շտապելու այլևս բառական հավաքածուիս վախճանական տպագրութեան, այլ միայն շտապել օր առաջ լույս ընծայել նախ հավաքածս բառերի ցանկը, որը շատ հետաքրքրական է ընդհանրապես, ապա մտածել լիակատար տպագրութեան փութացման, որ կարող է դարձյալ հետաձգվել թերևս»¹

Տեր Մանվելյանի «Բառափնջիկ»-ի հրատարակման խրախուսանքից էլ ավելի առաջ՝ 1907 թ. ծանոթանալով հայ բառարանա-

¹ Ս ի ո Ն Տ եր Մ ա ն վ ե լ յ ա ն, «Արարտայան բարբառի ժողովրդական բառերի ցանկ-բառափնջիկ», Վաղարշապատ. 1911 թ., էջ 3:

գրութիւն նշանակոր հոշորձան 2. Աճառյալի «Արմատիկան»
թիւն, Մտեր գրութ է. —

«Труд г. Ачаряна, на мой взгляд, когда он будет напечатан
полностью, составит крупное явление в лингвистической литера-
туре по армянскому языку, как ценное справочное пособие, подоб-
ного которому нет ничего не только в армянской, но и в европей-
ской научной литературе».